ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 13.02.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի
թիվ 04/17

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից, քննելով «Մեդիկալ Հորիզոն» ՍՊԸ-ի 23.01.2017թ. ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-04/17) և կից ներկայացված փաստաթղթերի պատճենները, «Թիվ 22 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի 27.01.2017թ. թիվ 022/65 գրությունը և կից ներկայացված փաստաթղթերի պատճենները, ՀՀ ֆինանսների նախարարության 13.01.2017թ. թիվ 03/73-1/311-17 գրությունը, ինչպես նաև ԳԲԽ-04/17 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Կենտրոն) 09.02.2017թ. ներկայացրած եզրակացությունը, պարզեց հետևյալը.

1. **<u>«Մեդիկալ Հորիզոն» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը</u>**

«Մեդիկալ Հորիզոն» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ներկայացրած 23.01.2017թ. բողոքով հայտնել է, որ 22.11.2016թ. որոշմամբ «Թիվ 22 պոլիկլինիկա» ՓԲԸ-ն դեղորայքի և պատվաստանյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպել է «Թ22ՊՈԼ-ՇՀԱՊՁԲ-15/4-2017» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի հրավերի պայմաններին համաձայն՝ հայտ է ներկայացրել «Մեդիկալ Հորիզոն» ՍՊԸ-ն: 12.12.2016թ. էլեկտրոնային փոստով ուղարկվել է Ընկերության որակավորումը հաստատող փաստաթղթերը:

Քանի որ փաստաթղթերում առկա է եղել անհամապատասխանություն, 20.12.2016թ. Ընկերության կողմից ուղարկվել է անհամապատասխանության շտկում՝ համանման պայմանագրերի, հանձնման-ընդունման արձանագրությունների պատճենները:

Ընկերությունը նշել է, որ 28.12.2016թ. էլեկտրոնային փոստով վերջինս տեղեկացվել է, որ «Թ22ՊՈԼ-ՇՀԱՊՁԲ-15/4-2017» ծածկագրով ընթացակարգը կասեցվել է և այն կշարունակվի ՀՀ ֆինանսների նախարարության կողմից պարզաբանում ստանալուց հետո:

«Մեդիկալ Հորիզոն» ՍՊԸ-ն 18.01.2017թ. էլեկտրոնային նամակով ստացել է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 7 արձանագրությունը, որի 1-ին կետի համաձայն՝ հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարության 13.01.2017թ. թիվ 03/73-1/311-17 գրությունը՝ «Ալֆա-Ֆարմ Իմպորտ» ՓԲԸ-ի և «Մեդիկալ Հորիզոն» ՍՊԸ-ի հայտերը մերժվել են:

Ընկերությունը հայտնել է, որ օրենքով սահմանված պահանջներին համապատասխան ներկայացրել է անհրաժեշտ փաստաթղթերը և վերջինիս հայտը մերժելու հիմքերն առկա չեն եղել:

Ընկերության կողմից վկայակոչվել են հետևյալ իրավական հիմքերը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը.

2) մասնագիտական փորձառություն.

3) տեխնիկական միջոցներ.

4) ֆինանսական միջոցներ.

5) աշխատանքային ռեսուրսներ:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 65-րդ կետի համաձայն՝ մասնակիցների, Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից.

3) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը՝ որպես սույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի պատճենը, իսկ դրա պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը.

Ընկերությունը բողոքով հայտնել է, որ Ընթացակարգին մասնակցելու համար վերջինիս կողմից հայտով ներկայացրած գնային առաջարկը կազմել է 373.900 ՀՀ դրամ:

Կարգի բովանդակությունում բառացիորեն նշված է «Կատարած պայմանագրի» մասին:

Այդ պայմանը ապահովելու նպատակով Ընկերությունը ներկայացրել է 08.02.2016թ. «ՄՊ09-ՇՀԱՊՁԲ-16/1-2» դեղորայքի մատակարարման պետական գնման պայմանագիրը (այսուհետ նաև՝ Պայմանագիր 1) համապատասխան հանձնման-ընդունման ակտերով, որոնց շրջանակներում կատարված մասը գերազանցել է սույն գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսը:

Մասնավորապես, ըստ Պայմանագիր 1-ի 4-րդ կետի՝ ապրանքի ընդհանուր գինը կազմում է 1.467.400 ՀՀ դրամ, որից հայտի ներկայացման օրվա դրությամբ մատակարարված է եղել 574.300 ՀՀ դրամի չափով ապրանք:

Նմանապես ներկայացվել է 16.02.2016թ. կնքված դեղորայքի մատակարարման «ՀԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/001-2» պայմանագիրը (այսուհետ նաև՝ Պայմանագիր 2) համապատասխան հանձնման-ընդունման ակտերով, որոնց շրջանակներում կատարված մասը նույնպես գերազանցել է սույն գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսը:

Մասնավորապես, ըստ Պայմանագիր 2-ի 4-րդ կետի՝ ապրանքի ընդհանուր գինը կազմում է 1.370.080 ՀՀ դրամ, որից հայտի ներկայացման օրվա դրությամբ մատակարարված է եղել 1.247.930 ՀՀ դրամի չափով ապրանք:

Հետևաբար, Ընկերության կողմից ներկայացված Պայմանագրերի շրջանակներում կատարված մասն ամբողջությամբ բավարարել է Կարգի 65-րդ կետով սահմանված պահանջները:

Արձանագրությամբ մերժման հիմքում դրվել է Հ ֆինանսների նախարարության գրությունը, սակայն ըստ Ընկերության, ՀՀ ֆինանսների նախարարությունը նման գրություն տալու լիազորություն չուներ: Առհասարակ, թե Պատվիրատուի կողմից կատարված հարցման, և թե ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ի պատասխան տրված գրության բովանդակությունից հնարավոր չէ հասկանալ, թե ինչ գործընթացի շրջանակներում է տրվել 13.01.2017թ. թիվ 03/73-1/311-17 գրությունը:

Օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասը հստակ սահմանում է գնումների գործընթացի կազմակերպման նպատակով լիազորված մարմնի լիազորությունները:

Նշված լիազորությունների շրջանակներում ներառված չէ օրենքի տարաբնույթ մեկնաբանության տեղիք տվող դրույթի մեկնաբանություն կատարելու լիազորությունը:

Տրված գրության ուսումնասիրությունը հստակ ցույց է տալիս, որ այն վերաբերում է Կարգի 65-րդ կետի և Օրենքի 5-րդ հոդվածով սահմանված դրույթի տարընկալման կապակցությամբ տրված մեկնաբանությանը և, ըստ էության, իրենից ներկայացնում է պաշտոնական պարզաբանում, որը չէր կարող տրվել նման եղանակով:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները:

Իրավական ակտի մեկնաբանությամբ չպետք է փոփոխվի դրա իմաստը: ՀՀ ֆինանսների նախարարությունը 13.01.2017թ. գրությամբ նշված հոդվածի կապակցությամբ հայտնել է

հետևյալը. «Վերոգրյալով պայմանավորված հայտնում ենք, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից, որպես «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ պետք է ներկայացվի նախկինում կատարված /ավարտված/ պայմանագրի պատճենը, իսկ դրա պատշաճ կատարումը գնահատելու համար՝ հիշյալ կարգով պահանջվող փաստաթղթերը: Այսինքն, գնահատող հանձնաժողովի կողմից պատշաճ կատարման տեսանկյունից գնահատման է ենթակա մասնակցի կողմից նախկինում կատարված և ամբողջությամբ ավարտված պայմանագիրը (կամ պայմանագրերը)»:

Տվյալ դեպքում Օրենքի իմաստը փոխվել է՝ նեղացնելով այն, քանի որ «կատարված» եզրույթը մեկնաբանվել է որպես ամբողջությամբ ավարտված պայմանագիր: Այնինչ մատակարարման պարագայում յուրաքանչյուր փուլի ավարտից և դրա կապակցությամբ հանձնման-ընդունման ակտ ստորագրելու պահից այդ մասով պայմանագիրը համարվում է կատարված:

Ըստ Ընկերության՝ իրավական ակտի դրույթների ոչ հստակ կամ տարաբնույթ ընկալման, իրավական ակտն ավելի բարձր կամ նույն իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտին կամ նույն իրավական ակտի տարբեր դրույթների հակասության կամ օրենքով նախատեսված այլ դեպքերում, իրավական ակտի ուժի մեջ մտնելու ժամկետի որոշման, իրավաբանական ուժ ունենալու հարցերի պարզաբանման, ինչպես նաև իրավական ակտի կիրառման բնագավառում ծագած այլ հարցերի ճշտման նպատակով տրվում է իրավական ակտի պարզաբանում:

Իրավական ակտի պաշտոնական պարզաբանումը պետք է ունենա ընդունման օր, հերթական համար և վերնագիր:

ՀՀ ֆինանսների՝ նախարարության գրությամբ օրենքի դրույթի մեկնաբանությամբ փոփոխվել է դրա իմաստը և ըստ էության նման մեկնաբանություն կարող էր տրվել միայն պաշտոնական պարզաբանման տեսքով, իսկ պաշտոնական պարզաբանման էությունը կայանում է նրանում, որ այն ընդունվում է հստակ ընթացակարգով, մատչելի է լինում հանրությանը և անձը կարող է իր վարքագիծը համապատասխանեցնել դրան:

Հետևաբար, ՀՀ ֆինանսների նախարարությունը լիազորված չէր նմանաբովանդակ գրություն տրամադրելու:

Ընկերությունը նշել է, որ չի ծանոթացել ՀՀ ֆինանսների նախարարության գրությանը և հնարավորություն չի ունեցել իր վարքագիծը համապատասխանեցնել դրան, այսինքն, ներկայացնել այդ գրությամբ առաջադրված նոր չափանիշին բավարարող այլ պայմանագիր:

Անգամ, եթե գրությունը կազմված լիներ այն տրամադրող մարմնի լիազորությունների շրջանակում, ապա գրությունը պետք է պատշաճ ձևով տրամադրվեր Ընկերությանը՝ հնարավորություն տալով իր գործողությունները համապատասխանեցնել նոր չափանիշին և ներկայացնել մեկ այլ պայմանագիր, որը բավարարում է այդ չափանիշին:

Սակայն առանց Ընկերությանը տվյալ գրությունը ներկայացնելու և իր վարքագիծը համապատասխանեցնելու հնարավորություն ընձեռելու այդ գրությունը դրվել է մերժման հիմքում:

ՀՀ Սահմանադրության 39-րդ հոդվածի համաձայն՝ ոչ ոք չի կարող կրել պարտականություններ, որոնք սահմանված չեն օրենքով:

Եթե Օրենքով սահմանված չէ կոնկրետ պարտականություն ամբողջությամբ կատարված, ավարտված պայմանագրի ներկայացման, նման պարտականություն չի կարող սահմանվել որևէ գրությամբ:

Օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ չեն կարող սահմանվել մասնակցի գնումներին մասնակցելու իրավունքի և որակավորման հետ կապված այնպիսի չափանիշներ, որոնք՝

1) նախատեսված չեն սույն հոդվածով.

2) խտրական են և սահմանափակում են մրցակցությունը՝ անհիմն կերպով բարդացնում կամ պարզեցնում են հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին.

3) համարժեք՝ չեն՝ ուղղակիորեն չեն բխում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման անհրաժեշտությունից:

Ընկերությունը գտնում է, որ տվյալ պարագայում խտրական՝ անհիմն կերպով բարդացնելով Ընկերության մասնակցությունը գնման գործընթացին, օրենքի պահանջներին հակառակ Ընկերության հայտի մերժման հիմքում դրվել է փաստաթուղթ, որը չէր կարող հիմք հանդիսանալ մերժման համար:

«Մեդիկալ Հորիզոն» ՍՊԸ-ն ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին խնդրել է կիրառել ժամանակավոր միջոց և կասեցնել «Թ22ՊՈԼ-ՇՀԱՊՁԲ-15/4-2017» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու գործընթացը, ինչպես նաև անվավեր

ճանաչել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.01.2017թ. տեղի ունեցած նիստի N7 արձանագրությունը և «Մեդիկալ Հորիզոն» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

2. «Թիվ 22 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.

«Թիվ 22 պոլիկլինիկա» ՓԲԸ-ն (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 27.01.2017թ. թիվ 022/65 գրությամբ «Մեդիկալ Հորիզոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնել է, որ 23.11.2016թ. Պատվիրատուի կողմից դեղորայքի և պատվաստանյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «Թ22ՊՈԼ-ՇՀԱՊՁԲ-15/4-2017/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ:

Ընթացակարգի 22-րդ, 33-րդ և 57-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Մեդիկալ Հորիզոն» ՍՊԸ-ն: 08.12.2016թ. Պատվիրատուն ծանուցել է Ընկերությանը՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնելու որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերի 2-րդ մասի հայտ պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը, ինչպես նաև հայտով առաջարկված ապրանքների անվանումները և տեխնիկական բնութագրերը: «Մեդիկալ Հորիզոն» ՍՊԸ-ն ներկայացրել է միայն ապրանքների անվանումները և տեխնիկական բնութագրերը: Կարգի 51-րդ կետի համաձայն Պատվիրատուի կողմից 19.12.2016թ. ծանուցվել է Ընկերությանը շտկելու անհամապատասխանությունը հրավերի պահանջների նկատմամբ և ներկայացնելու նաև նախկինում կատարված պայմանագրերը: «Մեդիկալ Հորիզոն» ՍՊԸ-ն որպես որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ ներկայացրել է 2016թ. կնքված, սակայն դեռևս չավարտված թվով երկու պայմանագրերի պատճենները:

22.12.2016թ. թիվ 6 որոշմամբ գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել նիստը կասեցնել և հարցում կատարել ֆինանսների նախարարությանը՝ պարզաբանում ստանալու համար, թե արդյոք անավարտ պայմանագրերը համարվում են Կարգի 65-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջներին բավարարող և արդյոք դրանք պետք է ընդունվեն Պատվիրատուի կողմից:

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 13.01.2017թ. թիվ 03/73-1/311-17 գրությամբ տրվել է պարզաբանում, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից որպես

«Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ պետք է ներկայացվի նախկինում կատարված (ավարտված) պայմանագրի պատճենը: Ընկերությունը գրությունը ստացել է 17.01.2017թ.-ին:

Ուստի «Մեդիկալ Հորիզոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատվել է անբավարար և մերժվել է, քանի որ համարվել է Կարգի 65-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջներին չհամապատասխանող: Հիմք է ընդունվել նաև ՀՀ ֆինանսների նախարարության 13.01.2017թ. թիվ 03/73-1/311-17 գրությամբ ներկայացված պարզաբանումն անավարտ պայմանագրերի վերաբերյալ:

3. ԳԲԽ-04/17 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը.

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը Խորհրդին է ներկայացրել իր 09.02.2017թ. եզրակացությունը և առաջարկել՝ «Մեդիկալ Հորիզոն» ՍՊԸ-ի կողմից 23.01.2017թ. ներկայացրած բողոքը մերժել:

4. ԳԲԽ-04/17 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-04/17 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Թիվ 22 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի կողմից դեղորայքի և պատվաստանյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպել է «Թ22ՊՈԼ-ՇՀԱՊՁԲ-15/4-2017» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ, որի 22-րդ, 23-րդ, 33-րդ, 42-րդ և 57-րդ չափաբաժիններին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Մեդիկալ Հորիզոն» ՍՊԸ-ն:

2. 02.12.2016թ. Ընթացակարգին մասնակցելու նպատակով «Մեդիկալ Հորիզոն» ՍՊԸ-ն հայտով ներկայացրած N 3.1 հավելվածով՝ «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշին համապատասխանության մասին հայտարարությամբ հայտնել և հավաստել է, որ Ընթացակարգի հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է «ՀԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/001-2» և «ՄՊ09-ՇՀԱՊՁԲ-16/1-2» պայմանագրերը, որոնց ընդհանուր արժեքը կազմել է 2.837.480 ՀՀ դրամ և

պարտավորվում է «Թ22ՊՈԼ-ՇՀԱՊՁԲ-15/4-2017» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերով սահմանված կարգով ներկայացնել սույն հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընդ որում, դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը գումարային արտահայտությամբ պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 08.12.2016թ. ժամը 10:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 3-րդ կետով որոշում է կայացվել Ընթացակարգի 22-րդ, 33-րդ և 57-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել «Մեդիկալ Հորիզոն» ՍՊԸ-ին:

4. Պատվիրատուն 08.12.2016թ. ժամը 16:20-ին էլեկտրոնային եղանակով ծանուցել է «Մեդիկալ Հորիզոն» ՍՊԸ-ին՝ հայտնելով, որ Ընթացակարգի արդյունքում վերջինս 22-րդ, 33-րդ և 57-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից, ուստի առաջարկել է մինչև 2016թ. դեկտեմբերի 13-ը ներառյալ ներկայացնել Կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ սահմանված փաստաթղթերը (որակավորումը հաստատող փաստաթղթերը):

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 19.12.2016թ. ժամը 10:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 5 արձանագրության 2-րդ կետով արձանագրել է, որ «Մեդիկալ Հորիզոն» ՍՊԸ-ն չի ներկայացրել նախկինում կատարված պայմանագիրը:

6. Պատվիրատուն 19.12.2016թ. էլեկտրոնային եղանակով ծանուցել է Ընկերությանը՝ հայտնելով, որ Ընթացակարգի փաստաթղթերում բացակայում է նախկինում կատարված պայմանագիրը՝ իր հնարավոր ժամանակացույցերով (տեխ., գնման, վճարման) և ընդունման-հանձնման արձանագրությունները: Նշված անհամապատասխանությունը հրավերի պահանջների նկատմամբ շտկելու համար հանձնաժողովը նիստը կասեցնում է և մասնակցին

առաջարկում մինչև կասեցման ժամկետի ավարտը՝ դեկտեմբերի 20-ը ժամը 18:00-ն ներառյալ շտկել անհամապատասխանությունը:

7. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 22.12.2016թ. ժամը 10:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 6 արձանագրության 1-ին կետով արձանագրել է, որ «Մեդիկալ Հորիզոն» ՍՊԸ-ի կողմից որպես որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթուղթ ներկայացված պայմանագրերը կնքված են 2016թ. և անավարտ են, ուստի որոշեց նիստը կասեցնել և դիմել ՀՀ ֆինանսների նախարարությանը պարզաբանելու տվյալ պայմանագրերի Կարգի 65-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջներին բավարարող համարվելու վերաբերյալ:

8. Պատվիրատուն 22.12.2016թ. թիվ 022/875 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ խնդրելով պարզաբանել, թե արդյոք «Մասնագիտական փորձառություն» չափանիշի գնահատման համար, որպես որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ նախկինում կատարված, սակայն չավարտված պայմանագիրը կարող է համարվել Կարգի 65-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջներին բավարարող և արդյոք պետք է այն ընդունվի Պատվիրատուի կողմից:

9. Պատվիրատուի 22.12.2016թ. թիվ 022/875 գրությանն ի պատասխան՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը 13.01.2017թ. թիվ 03/73-1/311-17 գրությամբ հայտնել է, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից որպես «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, պետք է ներկայացվի նախկինում կատարված /ավարտված/ պայմանագրի պատճենը, իսկ դրա պատշաճ կատարումը գնահատելու համար՝ հիշյալ կարգով պահանջվող փաստաթղթերը: ***Այսինքն գնահատող հանձնաժողովի կողմից պատշաճ կատարման տեսանկյունից գնահատման է ենթակա մասնակցի կողմից նախկինում կատարված և <u>ամբողջությամբ ավարտված</u> պայմանագիրը (կամ պայմանագրերը):***

10. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 18.01.2017թ. ժամը 10:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 7 արձանագրության 1-ին կետով որոշում է կայացրել, համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության 13.01.2017թ. թիվ 03/73-1/311-17 գրության, «Մեդիկալ Հորիզոն» ՍՊԸ-ի հայտը մերժել:

11. ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը՝ ի դեմս ԳԲԽ-04/17 բողոքը քննող հանձնաժողովի, 27.01.2017թ. կայացրած որոշմամբ, բավարարել է «Մեդիկալ Հորիզոն» ՍՊԸ-ի միջանկյալ ընթացակարգ կիրառելու վերաբերյալ պահանջը:

6.Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդը քննելով «Մեդիկալ Հորիզոն» ՍՊԸ-ի 23.01.2017թ. ներկայացրած բողոքը, հայտնում է հետևյալը.

Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող մասնագիտական փորձառություն:

Օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հրավերով սահմանվում են մասնակցի՝ տվյալ գնումներին մասնակցելու իրավունքը և որակավորումը գնահատելու չափանիշները, կարգը և դրա համար պահանջվող փաստաթղթերին (տեղեկություններին) ներկայացվող պահանջները:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հայտարարություն՝ օրենքով նախատեսված մասնակցության իրավունքի և հրավերով սահմանված որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 51-րդ կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացրած որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը

նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 52-րդ կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 65-րդ կետի համաձայն՝ մասնակիցների, օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից.

3) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը՝ որպես սույն կետի 1-ին ենթակետում սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի պատճենը, իսկ դրա պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

4) մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:

Ընթացակարգի Հրավերի 2.3-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է ունենա կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝ մասնագիտական փորձառություն:

Ընդ որում Մասնակցի՝

«Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) Մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն (Հավելված 3.1), որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր:

Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից: Նմանատիպ է համարվում դեղորայքի մատակարարումը:

3) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որպես սույն պարբերության 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշի հիմնավորող փաստաթուղթ ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի պատճենը, իսկ դրա պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով Ընկերության կողմից ***02.12.2016թ. ներկայացված հայտի*** N 4 հավելվածը՝ գնային առաջարկը կազմել է ***373.900*** ՀՀ դրամ:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով «Մեդիկալ Հորիզոն» ՍՊԸ-ն հայտով ներկայացրած N 3.1 հավելվածով՝ «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշին համապատասխանության մասին հայտարարությամբ հայտնել և հավաստել է, որ Ընթացակարգի հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների

ընթացքում ***պատշաճ ձևով իրականացրել է*** «ՀԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/001-2» և «ՄՊ09-ՇՀԱՊՁԲ-16/1-2» պայմանագրերը, որոնց ընդհանուր արժեքը կազմել է 2.837.480 ՀՀ դրամ և պարտավորվում է «Թ22ՊՈԼ-ՇՀԱՊՁԲ-15/4-2017» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերով սահմանված կարգով ներկայացնել սույն հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընդ որում, դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի (***373.900 ՀՀ դրամ***) հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը գումարային արտահայտությամբ պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

ա) *«Մեդիկալ Հորիզոն» ՍՊԸ-ի և «Թիվ 9 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի միջև 08.02.2016թ. կնքված «ՄՊ09-ՇՀԱՊՁԲ-16/1-2» ծածկագրով պայմանագիր*

«Մեդիկալ Հորիզոն» ՍՊԸ-ի և «Թիվ 9 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի միջև 08.02.2016թ. կնքվել է «ՄՊ09-ՇՀԱՊՁԲ-16/1-2» ծածկագրով պայմանագիրը, որի ***ընդհանուր արժեքը կազմել է՝ 1.467.400 ՀՀ դրամ, իսկ պայմանագրի վերջնաժամկետը սահմանվել է մինչև 25.12.2016թ.:***

Կարգի 65-րդ կետի և Ընթացակարգի Հրավերի 2.3-րդ կետի համաձայն՝ Ընկերությունը որպես «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշի հիմնավորող փաստաթուղթ պետք է ներկայացներ նախկինում կատարած («ՄՊ09-ՇՀԱՊՁԲ-16/1-2») պայմանագրի պատճենը, իսկ դրա ***պատշաճ կատարումը գնահատելու համար տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ <u>պայմանագրի սահմանված ժամկետում</u>*** (***մինչև՝ 25.12.2016թ.***) կատարումը հավաստող ակտի՝ հանձման-ընդունման արձանագրությունների պատճենները:

«Մեդիկալ Հորիզոն» ՍՊԸ-ն «ՄՊ09-ՇՀԱՊՁԲ-16/1-2» ծածկագրով Պայմանագրի պատշաճ կատարումը գնահատելու համար ներկայացրել է տվյալ Պայմանագրի կողմերի հաստատած՝ *19.05.2016թ., 09.06.2016թ., 07.07.2016թ., 16.08.2016թ., 29.08.2016թ.,*

05.10.2016թ. և 21.10.2016թ. պայմանագրի արդյունքը գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ ԱԿՏ N2, N3, N4, N5, N6, N8 և N9-ը, ինչպես նաև նույն օրվա հանձնման-ընդունման արձանագրությունները, ըստ որոնց մատակարարված ապրանքների ծավալը գումարային արտահայտությամբ կազմել է ***465.899 ՀՀ դրամ***, որը պակաս է պայմանագրով հանձնման ենթակա ապրանքի ընդհանուր գնից (***1.467.400 ՀՀ դրամից***):

«Մեդիկալ Հորիզոն» ՍՊԸ-ն ներկայացրած բողոքում նշել է, որ 08.02.2016թ. կնքված «ՄՊ09-ՇՀԱՊՁԲ-16/1-2» ծածկագրով դեղորայքի մատակարարման պետական գնման պայմանագրի ***կատարված մասը*** գերազանցել է Ընթացակարգի շրջանակներում վերջինիս կողմից ներկայացված գնային առաջարկի հիսուն տոկոսը, դրանով իսկ ընդունելով այն փաստը, որ Պայմանագիր 1-ը ունի դեռևս չկատարված մաս:

Ելնելով վերոգրյալից՝ Խորհուրդը գտնում է, որ «ՄՊ09-ՇՀԱՊՁԲ-16/1-2» ծածկագրով պայմանագիրը կատարվել է մասնակի և այն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ՝ 02.12.2016թ., չի կարող դիտարկվել որպես ամբողջությամբ ավարտված պայմանագիր:

բ) «Մեդիկալ Հորիզոն» ՍՊԸ-ի և «Հրազդանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի միջև 16.02.2016թ. կնքված «ՀԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/001-2» ծածկագրով պայմանագիր

«Մեդիկալ Հորիզոն» ՍՊԸ-ի և «Հրազդանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի միջև 16.02.2016թ. կնքվել է «ՀԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/001-2» ծածկագրով պայմանագիր, որի ***ընդհանուր արժեքը կազմել է՝ 1.370.080 ՀՀ դրամ:***

Պայմանագիր 2-ի 9.2 կետի համաձայն՝ սույն պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ դեռևս նախատեսված չեն: Համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կկնքվի ***լրացուցիչ համաձայնագիր***:

Սույն պայմանագրի կնքմանը հաջորդող տարում ֆինանսական միջոցներ չնախատեսվելու դեպքում պայմանագիրը համարվում է լուծված: Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կնքման պահից, սակայն գործում է համապատասխան ֆինանսական միջոցների նախատեսման դեպքում ***լրացուցիչ համաձայնագրի կնքման պահից սկսած մինչև կողմերի պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:***

«Մեդիկալ Հորիզոն» ՍՊԸ-ի և «Հրազդանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի միջև 16.02.2016թ. կնքված համաձայնագիր N 1-ի 1.2 կետի համաձայն՝ դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն

համաձայնագրի հավելվածով սահմանված ժամկետներում, բայց ոչ ***ուշ քան 2016թ. դեկտեմբերի 30-ը:*** Նշված համաձայնագրին կից ներկայացված N2 Հավելվածով՝ գնման ժամանակացույցով նախատեսվել է 1.370.080 ՀՀ դրամի (Պայմանագիր 2-ով նախատեսված ապրանքի ընդհանուր գինը) դեղորայքը գնել 2016թ. բյուջետային միջոցներով նախատեսված հատկացումների հաշվին, ըստ եռամսյակների:

«Մեդիկալ Հորիզոն» ՍՊԸ-ն «ՀԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/001-2» ծածկագրով պայմանագրի պատշաճ կատարումը գնահատելու համար ներկայացրել է Պայմանագիր 2-ի կողմերի հաստատած՝ 16.03.2016թ., 08.04.2016թ., 22.04.2016թ., 24.05.2016թ., 07.06.2016թ., 01.07.2016թ., 26.08.2016թ., 19.10.2016թ. և 12.12.2016թ. պայմանագրի արդյունքը գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ ԱԿՏ N2, N3, N5, N6, N7, N8, N10 և N11-ը, ինչպես նաև նույն օրվա հանձնման-ընդունման արձանագրությունները, ըստ որոնց մատակարարված ապրանքների ծավալը գումարային արտահայտությամբ կազմել է ***1.010.630 ՀՀ դրամ***, որը պակաս է պայմանագրով հանձնման ենթակա ապրանքի ընդհանուր գնից (***1.370.080 ՀՀ դրամից***):

Ելնելով վերոգրյալից՝ Խորհուրդը գտնում է, որ «ՀԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/001-2» ծածկագրով պայմանագիրը կատարվել է մասնակի և այն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ 02.12.2016թ., չի կարող դիտարկվել որպես ամբողջությամբ ավարտված պայմանագիր:

«Թիվ 22 պոլիկլինիկա» ՓԲԸ-ն 22.12.2016թ. թիվ 022/875 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ խնդրելով պարզաբանել, թե արդյոք «Մասնագիտական փորձառություն» չափանիշի գնահատման համար, որպես որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ նախկինում կատարված, <u>սակայն չավարտված (այսինքն ընթացիկ)</u> պայմանագիրը կարող է համարվել Կարգի 65-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջներին բավարարող և արդյոք պետք է այն ընդունվի Պատվիրատուի կողմից, ի պատասխան որի ՀՀ ֆինանսների նախարարությունը 13.01.2017թ. թիվ 03/73-1/311-17 գրությամբ հայտնել է, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից որպես «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ պետք է ներկայացվի <u>նախկինում կատարված /ավարտված</u>/ պայմանագրի պատճենը, իսկ դրա պատշաճ կատարումը գնահատելու համար՝ հիշյալ կարգով պահանջվող փաստաթղթերը:

Այսինքն, գնահատող հանձնաժողովի կողմից ***պատշաճ կատարման տեսանկյունից գնահատման է ենթակա մասնակցի կողմից նախկինում կատարված և ամբողջությամբ ավարտված պայմանագիրը (կամ պայմանագրերը):***

Խորհուրդն, ուսումնասիրելով Ընկերության կողմից Ընթացակարգի շրջանակներում ներկայացված մասնագիտական փորձառության չափանիշը հիմնավորող «ՄՊ09-ՇՀԱՊՁԲ-16/1-2» և «ՀԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/001-2» ծածկագրով պայմանագրերի պատճենները, գտնում է, որ դրանք կատարվել են մասնակի, ուստի դեռևս հայտը ներկայացնելու օրվա դրությամբ՝ ***02.12.2016թ., տվյալ պայմանագրերը չեն կարող համարվել որպես մասնակցի կողմից պատշաճ իրականացված, նախկինում պատշաճ կատարված և ամբողջությամբ ավարտված պայմանագրեր և որպես արդյունք՝ չեն կարող դիտարկվել Կարգի 65-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջներին բավարարող***, ինչը հաստատվել է նաև ՀՀ ֆինանսների նախարարության 13.01.2017թ. թիվ 03/73-1/311-17 գրությամբ:

Ելնելով վերոգրյալից՝ Խորհուրդը գտնում է, որ Պատվիրատուի կողմից չեն խախտվել գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները, ուստի «Մեդինա Հորիզոն» ՍՊԸ-ի բողոքը հիմնավոր չէ և ենթակա է մերժման:

Ինչ վերաբերում է Ընկերության այն պնդմանը, որ ՀՀ ֆինանսների նախարարությունը նման գրություն տալու լիազորություն չուներ, ապա այս կապակցությամբ Խորհուրդը հայտնում է, որ համաձայն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 87-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետի՝ իրավական ակտերի պաշտոնական պարզաբանում կարող է տալ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած իրավական ակտը կիրառող գործադիր իշխանության մարմինը՝ ընդ որում, մեկ բնագավառի վերաբերյալ պարզաբանումներ տալու իրավունք ունի միայն մեկ մարմին: Միևնույն ժամանակ Օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ գնումների գործընթացի բնագավառում լիազոր մարմին է հանդիսանում պետական ֆինանսների կառավարման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության պետական մարմինը, այն է՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Մեդիկալ Հորիզոն» ՍՊԸ-ի 23.01.2017թ. ներկայացրած բողոքը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողովի՝

Նախագահ՝ **Հայրապետյան Գևորգ**

Անդամներ՝ **Հովհաննիսյան Ռուզաննա**

Ղազարյան Գուրգեն